ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Կիսավերարկուն պետք է կարված լինի սև գույնի կիսաբամբակյա ջրայուղամեկուսիչ կտորից՝ բաղադրությունը՝ բամբակ 50% (±2%), պոլիէստեր 50% (±2%), իսկ խտությունը՝ 220-240 գ/մ2: Կիսավերարկուի երկարությունը գոտկատեղից առնվազն 25 սմ ներքև: Կիսավերարկուն պետք է ունենա 3 վրադիր գրպան՝ կափույրով, որից երկուսը կողային հատվածում, մեկը՝ ձախ կրծքավանդակի հատվածում: Կրծքավանդակի գրպանի վերին մասում պետք է կարված լինի լրացուցիչ վրադիր կտոր՝ նախատեսված «Անուն Ազգանվան» համար: Օձիքը՝ շրջվող, թևքերը՝ երկկարանի, հետևամասը՝ վերին կտրվածքով: Ներդիրը 4 սմ հաստությամբ սինթեպոնով և մետաքսյա աստառով, որոնք միմյանց հետ մգդակված են շեղանկյուն /փախլավանձև/ հյուսքով, իսկ թևքերի հատվածում 3սմ հաստությամբ սինթեպոն: Աստառի մակերեսային խտությունը պետք է կազմի 60-80գ/մ2, ձախ կողմում ունի ծոցագրպան: Կիսավերարկուն կոճկվում է 5 հատ կոճակով, իսկ ներսի կողմում պետք է կարված լինի պիտակ՝ ՔԿԾ գրառմամբ: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը՝ Վաճառողը պարտավոր է Գնորդի պահանջով համաձայնեցման ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը: Հանդերձանքի նմուշը համաձայնեցնելուց հետո Գնորդի կողմից Վաճառողին կտրամադրվեն հանդերձանքի չափսերը: Փաթեթավորումը՝ հակերով, հակերի մեջ 10 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը պիտակավորված: Պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	